

Առ այժմ այսքան բաւական համարիւ լով կուգրամտոյի ներկայ վիճակին վրայ գաղափար մը տալու, մերձաւոր ապագայի մէջ պիտի ջանամ ընթերցողներուս մանրաման և որոշ ծանօթութիւններ տալ նոյն դրութեան կազմութեան մասին, ինչպէս նաև անոր բարեմանութեանց և պակասութեանց վրայօք, և թէ ինչ յատկութիւններով օժտուած պիտի ըլլայ լեզու մը՝ իրապէս և տեւողապէս համաշխարհական ըլլալու համար։

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅՆԱՆ

## ՄԻԶՆԱԴԱՐԵՍՆԱՆ ՏԱՂԱԾԱՅ ԹԱԹՈՍ ԹՈՒԱԹԵՑԻ

(Հարուսակութիւն էջ 207)

ԵՌԲ ապրած է Թաթոս։

Պ. Կ. կոստանեանցը հասկցուց մեզ՝ թէ 1682էն դէպ ի մեզ պէտք չէ փոխադրել զայն, բանի որ այդ բաւականին օրինակուած Տաղարան մը՝ Թաթոսի «Համարաց» ընդօրինակած է։

Ե՞րբ Տաղարանները՝ որոնց Թաթոսէն քերթուածներ ունին՝ կամ անթուականն (նոտրգիր, Ժի-Ժի զարու գրուածըներ) և կամ նոր գրութիւններ Ժի Տաղարանը որ Թաթոսէն բանի մը կտորներ ունի՝ 1640ին ընդօրինակուած է, իսկ ժջ Տաղարանը թէև 1563ին գրուած է, բայց վերջին մասը (ուր են Թաթոսի տաղերը) 1604ին գրուած է Ստեփանոս Թոխութեցին։

Այսինուու Թոխութեցին՝ հայրենակից Թաթոսի՝ ունի նաև ուրիշ գրած ընդար-

ձակ Տաղարան մը<sup>1</sup>, որ նոյնպէս ի կափա օրինակուած է 1606ին (Բինէ)։ այս տաղարանն ալ ունի բազմաթիւ ցերթուածներ Թաթոսի անուամբ՝ գրուած հայերէն և տաճկերէն (հայատառ)։

Այս թուականէն աւելի հին Տաղարաններու մէջ հանդիպած չեմ Թաթոսի, և կրնամ վատահութեամբ ըսել՝ թէ Թոխութեցի Թաթոսու ապրած է ժջ զարու կէսէն վերջ, 1550ի ատենները ծնած։ և կամ այն է՝ որ մտերիմ ընկերն եղած է Ստեփանոս Թոխութեցի Տաղարացին՝ և կամ ուսուցիչը։

Բաց ի մեր մատենադարանի 1907ին ստացած (1606ին գրուած) տաղարանէն՝ որ տասնէն աւելի կտորներ ունի Թաթոսունէն, 1908ին Պարտիզակի մէջ տեսայ ձեռագիր մը (Լիմ անապատէն փոխադրուած), որ բաւական թուով տաղեր ունէր Թաթոսի անուածով։ Եւ վերջերս Մեծ։ Տ. Նորայրի միջոցով ձեռցս ինկաւ «Մոռոզեան» Տաղարանը<sup>2</sup>, որ նոյնպէս՝ բաց ի Թաթոսի ինծի ծանօթ տաղերէն՝ ունէր նաև հատմը բոլորովին նոր։

Թաթոս Թոխութեցին՝ ինծի ծանօթ երեսուն կտոր ցերթուած ունի, որուն տասը հայերէն են, իսկ բանը հայատառ տաճակերէն։

Ցարդ մի միայն «Հայ մտաց յամիս մարտին» սկզբաւորութեամբ ցերթուածը ծանօթ էր Հ. Ալիշանէն և Պ. Կ. կոստանեանցէն, որուն պակասաւոր օրինակ մը գտնուած է վերջերս «Բժ. Գար. Ցովհաննիսիսանի ձեռագիր տեսրակներ» ուն մէջ, զոր հրատարակեց Այստառ ամսագիրը։

1875ին Բազմաէպի մէջ (էջ 351) հրատարակուած է վեցտողհան Ծենեկան մեղիկի մը, որուն տողերուն սկզբաւորերը «Թաղեսոս» կը յօդեն։ թէև Թոխութեցին

1. Այս տաղարանը ստացած ենք 1907ին, որուն մասին խօսած ենք 1907ի Տաղարացիպին մէջ (էջ 401)։

2. Ֆեռագիրիս մասին տես Կոստանդին Երգընակից, տպ. ի. Ս. Ղազար, էջ 181, Տ. Նորայրի 801կմ 1910

891։

գուրս ուրիշ թաղոս երգիչ չեմ ճանչնար,  
բայց վստահ եմ թէ այդ մեղեդիին հեղիւ-

նակը մեզ ծանօթ թոփաթեցի թաղոսը չէ:  
Այդ տողերը որպէս զի թոփաթեցի  
թաղոսին հետ ապրին՝ կը հրատարակեմ  
հոս:

### Մեղեդի Ծենիեան

Թագաւոր փառաց խոնարհեալ ի հայրա-  
կան ը ծոցոյ,

Ահաւոր տեսեալ ը վերնոց՝ սոսկային ըս-  
քանչացեալ.

Դողացաւ մահ ընդ երեւումըն ը քո ի  
յերկրի:

Եկեալ մոգուցն աստեղը նըշանաւ ի յայրն.  
Ռւստի և հովհեր վրկայց ծընդղեան ըո,  
Արքասաց ձայնին աղաղակեն առ Քրիս-  
տոս Աստուած, փառք քեզ,

\*

Ահաւասիկ թաթոս թոփաթեցւոյ հա-  
յերէն տաղերը՝ որոնք ինձի ծանօթ են  
այլ և այլ Տաղարաններէ:

Ա. - Աստուած անեղ ես աննըման

Բ. - Ես յուսով հաւատով

Գ. - Երրուսաղէմ քաղաք մի կայ

Դ. - Թէ Կուգես որ հոգւոյդ

Ե. - Հազար կենդանակերպ

Զ. - Հայ մըտաք յամիս մարտին

Է. - Հոգին մարմոյոյն ասաց

Ը. - Յորժամ յարեւելից ի դատաստան

Թ. - Տէր արարիչ արարածոց

Ժ. - Քրիստոս որդի Աստուածոյ:

Թաթոս թոփաթեցին թէն համեմա-  
տութեամբ բեղնաւոր է, բայց զեթէ բո-  
ւոր իր քերթուածները՝ տկար ու անար-  
ժէք են. հազուագիւո են գեղեցիկ տողերը:  
Բայց ինչ որ ալ ըլլայ, մեր գործին ամ-  
սողջութեան համար պիտի հրատարակենք  
զանոնք:

1. Թաթոսի տանկերէն տաղերը՝ թարգմանու-  
թեամբ՝ միք առանձին հրատարակելիք հասորին  
մէջ պիտի գտնեն հետաքրքրուողդ, նաև մեր ու-  
սումնասիրութեան մի մասը: Հոն պիտի դնենք  
նաև ձեռագրաց ընթերցուածներու տարբերու-  
թիւնք:

Թարոսի ասացեալ

Աստուած անեղ ես աննըման,  
Երկրպագեմք Երրորդութեան.  
Դու զօրաւոր ես և միայն,  
Ու ամէն բան է քեզ յէեան,

Զորեկերպացեան աթոռ ունիս,՝  
Բարձր ես նըստել, դու ես միայն,  
Ու սերորդէք քեզ սպասաւոր՝  
Հըեշտակապետքըն միարան:

Անքըննելի ես թագաւոր,  
Երրորդութեան մի տէր ՚ւ իշխան,  
Ու Աղայէլ զքեզ ուրացաւ՝  
Յերկնից անդունդը խորտակեցան:

Հազարումէկ անուն ունիս,  
Մէկն ի մէկէն է զանազան.  
Որ է գրած յաւետարան,  
Բնկենցիցիցն կու կարդան:

Սբանչելագործ ես ՚ւ իմաստուն,  
Ու ըո սսիս մարդ չի հասան,  
Ոչ վարդապետ, ոչ քահանայ,  
Ոչ կարդացած փիլիսոփիայ:

Երկինքըն բարձր համատարած  
ի յաշխարհիս վրայ խորան.  
Ոչ սուն ունի և ոչ զերան,  
Թագաւորին է ապարան:

Երկիրս բըխէ զզիւր բարին՝  
Ու ըո ստեղծուածքը լիանան.  
Դու ես տըւող ամէն բարեաց,  
Քո ահէտ այլ կու դողան:

Անտանելի բաներ ունիս,  
Փո արարածքըդ հիանան.  
Զուրն ու բամին օդն ու կըրակն  
Չորս տարերքս են պիտեան:

Եօթանասուն երկու լեզուն  
Քեզ հանապազ օրհնէք կու տան.  
Դու ողորմած ես և զրթած,  
Զի նուազես ըզնա ֆազան:

Ամանց ելան ի յաշխարհէս՝  
Ազօթք արին ճգնողական,  
Զերանաւէտ ձայնըն լրսեն,  
Խառնին ի դաս յաջակողմեան:

Ես մեղաւոր եմ անիրաւ,  
Չունիմ ազօթք ինձ բաւական.  
Զերորդութիւնըն դաւանիմ՝  
Որ բու տեսուդ արժանանամ:

Արեգակն սուրբ է և արդար,  
Նրմանեցաւ լրրորդութեան.  
Յորժամ ծագէ յարեւելից՝  
Արարածոցը լուս կու տան:

Ջլուսինն ամսու չափ է պըրեւ,  
Երեսուն օր չէ ի լրման,  
Որ այլազգիքն են հետեւել,  
Պայրամ կ'անեն մոլորական:

Յորժամ որ գաս ի դատաստան  
Առաքելովք երկոտասան,  
Գարրելական փողըն գոչէ,  
Կրշնոք դընեն արդարութեան:

Արդարը տեսնուն ուրախանան,  
Երկրէս յերկինքըն վերանան,  
Անուն զիւրեանց փառը ու պատին,  
Աւախի մըտնեն ի բուրաստան:

Տաղ հոգոյ խիստ գեղեցիկ

Ես յուսով հաւատով առ քեզ յուսանամ,  
Աղախին եմ արեամբ զընած քու ծառան.  
Պատերազմ է կապեր հետ ինձ ստանան,  
Կու զըրէէ ի դրախտէն որպէս Աղամ:

Ես նաւի պէս ծովուն մէջն կու ծրփամ,  
Շահ ու զէն կու քըննեմ թէ զի՞նչ լինենամ.  
Շահ չունիմ ես ի հոս յերկար կու կենամ,  
Ճանապարհ չեմ հորդեր յանդէն կու զընամ:

Նեղ է դուռն անտենին, սակաւը կու  
[գլնան.  
Ոմէն օր կու քարոզէ զիրք ՚ւ աւետարան,

Զեմ շիներ ես ի հոն ընծիկ օթեւան, [թեան:  
Իմ դիմացս է փակուեր դուռն արքայու-

Փափկանամ մարմբնովս և ուրախանամ,  
Բամէն օր մահն ի մօտս ես անմահանամ.  
Գումարեր եմ մեղօք ՚ւ ի քուն կու լինամ,  
Յիմարութեամբ ըզմահուս օրըն մոռանամ:

Լու յիշեմ ես զիմ մեղքս և խիստ կ'երեւ  
[բամ,  
Յայն ահեղ դատաստանն ինձ վայ պիտի  
[տամ.  
Թէ ի հոս ճար անես դու անտենական,  
Արժանաւոր աղօթք այնեմ բաւական:

Թէ մըտիս բարձրանամ՝ նա՛ շատ ցածա-  
[նամ,  
Խոնարհութեամբ ըզհոգւոյս ճարակն իմա-  
[նամ.  
Թէ ի հոս հոգեւոր աղքատ լինենամ,  
Նա ի հոն մհծանամ զրախտին տիրանամ:

Մանրացեալ եմ մեղօք ու ծուլ կու կենամ,  
Թ՛ապաշխարեմ թողութեան արժանանամ.  
Փափակեր եմ յուսոյդ յուսով յուսանամ,  
Կատարէ զիմ խորհուրդս որ ես կ'ուզենամ:

Յորժամ տեսնուն ըզլոյսն և ուրախանամ,  
Եւ օրհնեմ զեղեղ Քրիստոսի մէջ յարութեան,  
Ապաւէն բարեխօս ըզքեզ ունենամ,  
Զի դու մայր Քրիստոսի սուրբ կոյս տի-  
[բամայը:

Թաթոս, քեզ ճար արա, այս կեանքս  
[օթեւան,  
Ոնց որ չէ գոչեր փողըն գարբելական:

Տաղ թաղեսի ասացեալ

Թէ կ'ուզես որ հոգոյդ ճարակ դու անես,  
ԶԱստուծոյ սէլն ի բու սըրտէդ չըհանես.  
Զի թէ Աստուծած զըթած և ողորմած ես,  
Մառայդ ապաշխար՝ նա դու ներող ես:

կու տաս շատ մալ և գանձ և զմար-  
[դըն փորձես,  
Հայիս իւր վերայ թէ շուքը այնէ՛ քեզ.  
Յայնժամ նա ժառանգէ զինչ պատրաս-  
[տեալ ես,  
Երանի՛ այն մարդու զոր դու սիրեր ես:

Թորժամ որ մեղանչեմ՝ ապականիմ ես,  
Լալով զառն արտասուօց աղաչեմ ըզքեզ,  
Գիտես որ ճար չունիմ, իմ ճարըն դու ես,  
Զիս քո արքայութեանըդ զուրկ չըհանես:

Դառնամ խոնարհութեամբ ապաշխա-  
[քեմ ես,  
Եատրազումնախատինքի անձս առնումես,  
Գիտեմ որ մարդասէր և ողորմած ես,  
Մաքրէ՛ զիս ի մեղաց՝ արժանացն՝ քեզ:

Աիրով մեզ պահապան հրեշտակ տուեր ես,  
Ըզքու անչափ բարին մնզ պարգևեր ես.  
Գիտեմ որ զորդ դատաստան կ'առնես.  
Զամէն մարդ իւր մեղօբն կորուսանես:

Փափկանամ մարմովս ուրախանամ ես,  
Ամէն պահ մահն ի մօսս՝ անմահանամ ես.  
Վայ թէ յանկարծակի փոթորակիմ ես,  
Այն ահեղ դատաստանն ինիմ սեւերս:

Մանրացեալ եմ մեղօբ խիստ ծուլանամ ես,  
Զյիշեմ ըզօր մահուս ու գումարիմ ես.՝ [զմեզ.  
Սատանայական փորժութեան դու պահեա  
թէ սրբութեամբ կենանք՝ լինանք պար-  
[քերես:

Թէ դու զանմահութեան ջուրըն խըմեր ես,  
Զնէհար զենէհար զնողիս չըզըրկես.  
Մըտիդ անմահանաս ու մեղքըն գործես,  
Յայնժամ ի յԱստուծոյ աշացն ելանես:

Յորժամ խոստովանիս՝ դառըն հառաչես,  
Յիշեմ զիմ շատ չարիքն ու նուալիմ ես.  
Ի քեզ եմ յուսացեալ, իմ յոյզըն դու ես՝  
Որ զիս հաղորդութեան արժանացընես:

Մարդկային բնութեանս համար խաչեցար,  
Խաչի ըզզոժուոց դուռն աւերեալ ես.

Զօր աստուածութիւնդ մեզ յայտներ ես,  
Եւ ըզգերիքն ի գերութիւնէ ազատեր ես:

Դու անմահ թագաւոր աթոռ նըստեալ ես,  
Խօսօքդ զամենայն բան կատարեր ես.  
Վերայ արաթածոցդ ուրախացեր ես,  
Զարցայութիւնդ արդարոցըն խոստացեր ես:

Թաղէոս, թէ դու զայս բաներս երգեր ես,  
Ամէն բանի վըրայ շատ աշխատեր ես,  
Կուռզես որ դու քեզի յիշատակ շինես  
Որ տեղ որ բան ասես 'ողորմիս լըսես:

Ոտանաւոր և տաղ ի թոխարցի մղուսիցի  
Թարուսկե ասացեալ՝ վասն տեօրէնորեան  
Քրիստոսի

Հազար կենդանակերպ Աստուած ստեղ-  
[ծել է,  
Զամէնըն Արամայ հնազանդ արել է,  
Ծդրախտըն լուսափայլ նըմա շնորհել է,  
Եօթնապատիկ փառօք՝ զնա զարդարել է:

Չունէր իւր օգնական, սըրտիկն ի սուզ էր,  
Որ զիւր սըրտին խորհուրդըն նըմա պատմէր.  
Քաշեց կող մի կողէն ստեղծեց Եւայէ,  
Եզեւ իւր օգնական՝ զիւրար ժառանգէ:

Սատանան հընարուք զԱրամ խարել է,  
Զօդըն պատճառա արեր 'ոդ' Եւայ խօսել է,  
Զմահկանացու պըտուղն ուտեցուցել է,  
Կերեր 'և ի յԱստուծոյ աչացն ելեր է:

Աստուածութիւնն Արամայ բարկացել է,  
Զինչ որ նորա տըւերն դարձեալ առել է,  
Անիծեր 'և ի դրախտէն ի դուրս արել է,  
Սատանայի ձեռըն զերի մատներ է:

Յանդիման զըրախտին հինգ օր լացել է,  
Լացեր որ արտասուըն արիւն դարձել է,  
Աստուածութիւնն Արամայ խըզնացել է,  
Որ վեց հազար տարի պայման դըրել է:

Եւայ՝ այլ ըզկայէն յառաջ ծըներ է,  
Որ նա չար և մեղաց պատճառ եղել է.

Անպարտ զեղօրն արիւնըն նա վաթել՝ է, ԶԱՄՈՒՈՒԾՈՅ և ըգծնողաց անէծըն առել է:

Իրկին Աստուած կայենի բարկացել է, ԶԵՄՆԱՎԱՍՏԻԿ անէծըն ի վրան զրբեր է. Նա այլ՝ այսահարեր՝ ' ի դուրս անկեր է Եւ ի ճակատ նորա՝ կօտոշ բռւսել է:

Աղամայ Սէթ անուն որդի եղել է, Հանապազ ըզծոնօղն մըխիթարել է. Ենովը<sup>10</sup> այլ ի նարմէ յառաջ եկել է, Զանմահութեան զրախտըն<sup>11</sup> ժառանգեր է:

Նոյ այլ<sup>12</sup> ի յԱՄՈՒՈՒԾ հրաման առել է, Շուտով ամուսնացեր տապան շիներ է. Աշխարհիս բարկացեր կ'ուզէ անցընէ, Զըրով ջրհնեղեղով կու ապականէ:

Նոյին նըման<sup>13</sup> յաշխարհս եկել չէ, Որ հինգ հարիւր տարի նա կոյս կեցել է. Աղամայ ըլնութեան<sup>14</sup> բակիզըն եղել է, Ամէն նահապետաց նա հայր կոչել է:

Նոյէ այլ հինգհարիւր տարի անցել է, Եթանաստուն ' երկու պորտ յաւեցեր է. Նորա զաշտարակին հիմն ձըգել են<sup>15</sup>, Եթանաստուն ' երկու լեզու բաժնել<sup>16</sup> են,

Մերիսէթ քաշանայն բակիզըն եղել է, Արրահամ ի նարմէ<sup>17</sup> օրհնէր առեր է. Քառասուն օր պահօք արօթք արել է, Աստուածութիւնըն նորա հիւր եկել է:

Սահակ Արրահամու աւետեաց զաւկէ, Որ ի յամուկ մօրէ ինքըն ծընել է. Թակոր հետ Աստուուծոյ գօտէմարտել է, ԶԱՄՈՒՈՒԾՈՅ աշօք տեսել է:

Եղովսէփ խիստ զեղեցիկ մանուկ եղել է, Զերկոյտասան եղարցն ի մէջն ընդպել է. Ինքն այլ ի ցուն եղել ' երազ տեսել է, Զերազն իւր ծընօղացն ելեալ պատմել է:

Եղնօղըն որ զայն լրսել ուրախացել է, Հինաս դու թագաւոր՝ զթովսէփ գովել է.

Եղբարըն ի հետ նորա գէմ նախանձել է<sup>18</sup>, Տարան գուրն իջուցին թ'այսահարել է:

Վաճառեցին<sup>19</sup> զթովսէփ երսուն դըրամէ. Համբաւ հանին նըմա<sup>20</sup> զայլըն կերել է. Գնացերը<sup>21</sup> ի յեզիպտոս զերի եղել է, Աստուած ըզնա ի հոն անփորձ պահել է:

Այն մարդն որ զնա զընել ' և ի տուն Նա կինն ըզնա սիրել որդի արել է՝ տարել է, Մատանա բանսարկուն կինըն մըտել է, Կ'ուզէր ապականէր, Յովսէփ փախել է:

Մովսէս Եզիպտացին մեծ մարգարէ է, Որ նա հետ Աստուուծոյ փառարանել է. ԶՓարաւոն հեծելով ծովն ընկըմել է, Եւ զազէն<sup>22</sup> խարայէլի նա ազատել է:

Քառասուն տարի յանապատին կացել է, Մանանային ըզնոսա կերակրել է. Երկոյտասան վըտակ յիշմէն ըընել է, Որ գէմն ինքն էր Քրիստոս զնոսա պահել է:

Ցեսու որդին Նաւեայ թագաւորել է, Եւ մեղաց զերիբով նա աւերել է. Զզընալ արեգականըն արգիւեր է, Զերիբովի պարիսպն զէտ մոմ<sup>23</sup> հալեր է:

Մեծ<sup>24</sup> մարգարէն Դաւիթ յաղթող եղել է, Պարագարիւ ըզդողիաթն յալթել է. Մողովմոն ըզտաճարին հիմն ձըգել է, Քառասուն ու վեց տարին նա կատարել է:

Կայծակնամաքուրն Եսայիստ է Որ գՔիստոսի գալուստըն նա կու պատմէ. Մանասէ թագաւորն զնա իրզարել է, ՅԱՄՈՒՈՒԾՈՅ պատուհան ի վրան իջեր է:

Հրեշտակըն Գարրիէլ քեզ աւետել է, Հոգին սուրբ, Մարիամ, առ քեզ եկել է<sup>25</sup>. Եւ տաճար սըրբութեան ըզեկ մաքրել է<sup>26</sup>, Որ ինն ամսոյ տըզայ ի քէն<sup>27</sup> ծընել է:

Թագաւորըն մոգուց խընդիր եկել է, Ասկի, կընդըռուկ, զըմուռ ընծայ բեմել է.

Քո սուզր աստուածութեանդերկըրպագել է, Արբայեցոց մանկունքն օրհնաբանել է,  
Աիրով զԵրրորդութիւնըն դաւանել է:

Քառասնօրեայ Յիսուս տաճարն եկել է, Քրիստոս<sup>36</sup> ի վերնատուն պատարագել է,  
Եւ դուսն ողորմութեան ինքնին բացել է, Առաքելոցն զոտուին<sup>37</sup> լրվացել է.  
Սիմէոն ծերունին ի հոն տեսել է, Յուղաց այլ զերեսուն արծաթն առել է,  
Զիրիստոսի զիրկն առեալ՝ ու ուրախացել է:

Թշուառական Հերովդէս նախանձել է, Քաքարիա տաճարըն զըլիստել է.  
Բեղդէհահեմայ<sup>38</sup> մանկունքն կոտորել է, Պատուհան Աստուծոյ վըրան իջեր է:  
Պատուհան Աստուծոյ վըրան իջեր է:

Լրումն մարգարէից սուրբ Յովաննէս է, Բակիզըն Առաքելոցն կարապեսն է.  
Զիրիստոսի ի Յորդանան գետ մըլլըրել է, Եւ<sup>39</sup> ըզըսկըզբնական մեղքըն ջընջել է:

Քառասուն օր պաք յանապատին կացել է, Բանսարկուն սատունայ ըզնա փորձել է.  
Խւր սուրբ աստուածութեամբ ըզնա<sup>40</sup> յաղ- |թել է,  
Ապա առաքելոցն ըսկիզըն արել է:

Տիրերական ծովէն զնոքա կոչել է,  
«Երիք որսորդք մարդկան» նոցա հրամել է.  
Տանուերկու առաքեալք լըման ընդրել է,  
Յուղա նախանձաւորն կեղծաւորել է:

Թափօրական լերին այլակերպել է,  
Ճիւր սուրբ աստուածութիւն նոցա յայտ- Մովսէս և Եղիս երեւցել է, [նել է,  
Յայր Աստուածի ի յերկնիցըն<sup>41</sup> վըկայել է,

Յիսուս<sup>42</sup> ժողովըրդեանըն քարոզել է,  
Հինգ հազար հոգի հոն ժողովել է,  
Խիւր սատուածութիւնովըն ըզմէցէկեր է<sup>43</sup>  
Որ հինգ նրկանակով լիացուցել է:

Եւ ի ինեղանիայ փառօք եկել է,  
Մարթա և Մարիամ ի դէմ ելել է.  
Լալով, արտասուելով ի յոտքն<sup>44</sup> անկել է,  
Սիրելին ըզՂազարոս կենագործել է:

Քրիստոս<sup>45</sup> աւանակաւ տաճարն եկել է,  
Քահանայք նախանձու ի դէմ ելեր է.

Երրայեցոց մանկունքն օրհնաբանել է,  
Սակուկեցիք մըտօքըն կուրացել է:

Քրիստոս<sup>46</sup> ի վերնատուն պատարագել է,  
Առաքելոցն զոտուին<sup>47</sup> լրվացել է.  
Յուղաց այլ զերեսուն արծաթն առել է,  
Կ'ուղէ զուրբը վարդապետն որ ի մահ<sup>48</sup>  
[մատնէ:

Յիսուս ի յըմբընումն օթեւանել է,  
Աղօթեր հինգ հարիւր ծունըր զըրել է.  
Առաքեալըն ամենայն սըրտարեկել է,  
Քետրոսի իւլ մըտին հըպարտացել է:

Յուղաց այլ Հըրէիցն առաջնորդել է,  
Ակէնն այնոր համար զարծաթն առել է.  
Ըմբընեցին զՔրիստոս թէ մահապարտ է,  
Որ գա մեր օրինացըն հակառակ է:

Տարան ի<sup>49</sup> Պիղատոս որ նա հարցանէ,  
Քահանայքն և զըպիրըն չարախօսէ<sup>50</sup>.  
Ասաց<sup>51</sup>. Ռւստի՞ես զուկամ յո՞ր աշխարհէ.  
Ասաց. Նազովըցի, անունս Յիսուս է:

Պիղատոս կամեցաւ որ զնա արծակէ,  
Միարան գոչեցին թէ «ի խաչ հանէ».  
Աւէր ըզգա ի ծեզ զինչ որ պիտոյ է,  
Չունիմ դորա մեղաց և ոչ<sup>52</sup> յարենէ:

Տարան ի խաչ հանին, նա մեզ ֆըրկիչ է,  
Որ զըրժոխն աւերէ զհոգին ազատէ.  
Յովսէփ հարիւրապետըն խիստ սըրտում է,  
Կ'ուղէ Պիղատոսէ զմարմինըն խընդըէ:

Պիղատոս այլ ասաց թէ նա արդար է,  
Արդար և ճըշմարիտ Աստուածըն նա է.  
Յովսէփ խաչին առջեւ ծընկաց անկել է,  
«Այսոր Աստուած և հըզօրն» ի հոն երգել է:

Յիսուս խաչին ի վայր ի գերկն անկել է,  
Գըրկովն ի պատասեղն<sup>53</sup> ի վայր դըրել է.  
Պատեաց սուրբ կըտաւով զինչ որ որէն է,  
Եղեալ<sup>54</sup> ի գերեզման և զընացել է:

Նա իւղարեր կանայք զտեղին տեսել են,  
Եկին ի գերեզման խընկօց ածել են,

Հրեշտակը ն լուսափայլ երեւեցել է,  
«Լանայք, ձեզ աւետիս, Քրիստոս յարել է»:

Առաքեալը միաբան հոն ժողովել է,  
Ցուղա Սկարովտացին հոգով կորել է.  
Երթան ի Գալիլիա<sup>10</sup> որպէս հրամեր է.  
Պետրոս գոլուխ ի կոր՝ ոտիւքն անկել է:

Իմ սիրոն աշակերտըն դու ես Պետրէ,  
Դարձիր դու և զերպարթը մըլիթթարէ<sup>11</sup>,  
Քառասուն օր նոցա երեւեցել է,  
Ապա փառօք յերկինըս համբարձել է:

Զայս բաներս Թոփխաթցի<sup>12</sup> Թաթռոն ա-  
Երանի<sup>13</sup> այն մարդոյն բարի գործել է, [սել է,  
Թեթեւ շալկով յաշիարհէս զլնացել<sup>14</sup> է,  
Անդէն զերանաէս ճայնըն լլսել է:

### Տաղ Թարոսի

Հայ<sup>1</sup>, մըտաք յամիս մարտին,  
Մատոելն ամենայն<sup>2</sup> ծաղկին.  
Հոտըն գայր զարհանային<sup>3</sup>,  
Լոյսն ելնէ Հայոց զատկին:

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ<sup>4</sup> քաղաքին  
Ամէն<sup>5</sup> ազգ հոն ժողովին,  
Հաւսար<sup>6</sup> ուրախանային,  
Լոյսն ելնէ Հայոց զատկին<sup>7</sup>:

Հայ ու Հապաշ<sup>8</sup> Ասորին  
Շուրջ գան սուրբ զերեզմանին.  
Խենդիրըն է Լուսաւորչին<sup>9</sup>  
Լոյսն ելնէ Հայոց ազգին<sup>8</sup>:

Յըսունդն ի Յեթղեհէմին<sup>9</sup>,  
Աշխարհս ի հոն ժողովին<sup>10</sup>,  
Փառք ի բարձունս երգին,  
Լոյսն ելնէ Հայոց զատկին<sup>11</sup>:

Յեղերն Յորդանան գետին<sup>12</sup>  
Քրիստոս ի ջուր մըկրտին,  
Ամէն<sup>13</sup> ի մեղաց մաքրին,  
Լոյսն ելնէ Հայոց զատկին:

Փորձութի ի<sup>14</sup> յանապատին,  
Մի տար զմեզ ի փորձութիւն,  
Պահէ ըս<sup>15</sup> պատուիրանին. Լոյսն...

Յիսուս ի<sup>16</sup> ճանապարհին  
Տոն զայ ի Զաքէոսին<sup>17</sup>  
Ելիալ ժանտաթըզենին. Լոյսն...

Կոյրը<sup>18</sup> կային ճանապարհին,  
Զայնիւ<sup>19</sup> ազաղակէին.  
Կատարեցաւ խընդրելին,  
Լոյս տըլաւ աչաց նոցին<sup>20</sup>:

Ի Բեթանիա զային  
Նընջութին ի<sup>21</sup> Ղազարոսին.  
Չորս առուր<sup>22</sup> մեռեալն յարին.  
Լոյսն<sup>23</sup> ելնէ Հայոց զատկին:

Բազմեցաւ յաւանակին,  
Ժողովք փառարանէին,  
Հանդիք տարածանէին. Լոյսն<sup>24</sup>...

Տաճարն<sup>24</sup> ի Սողոմոնին  
Սաստեց<sup>25</sup> հատավաճառին,  
Եկրը և տղայը օրհնէին. Լոյսն...

Ակրնատունն ի Յովսեփին  
Ակիզըն արար<sup>26</sup> պատարազին,  
Եղատակ նորոյ ուխտին. Լոյսն...

Նախանձաւոր<sup>27</sup> Յուղային  
Երեսուն արծաթ տըկին<sup>28</sup>,  
Մասնեց քահանայապետին. Լոյսն...

ԶԾէրն անպարտ ի խաչ հանին  
Մէջ երկու յաւաղակին.  
Նա է<sup>29</sup> փրկիչ ամենին. Լոյսն...

Յովսէփ Արեմաթացին  
Եկաւ ի գորգոթային,  
Տեսնոյր զՅիսուս կենդանին. Լոյսն...

Ի խաչէն ի վայր առին,  
Կտաւով խընկով<sup>30</sup> պատեցին,  
Դըրին սուրբ գերեզմանին. Լոյսն...

Զգերեզմանը<sup>11</sup> կրնքեցին,  
խաչողնին կու պահէին,  
Խաղաբը կանայցն եկին. Լոյսն...

Յարեաւ զատկին կիրակին,  
Եղեւ մեզ ի փրկութիւն,  
Խաչողնին գումարէին. Լոյսն...

Թաթուն երես գոհութիւն,  
Ջրանս ասաց մնօրինին.  
Աչօցն է տեսեր զաեղին.  
Լոյսն ելնէ<sup>12</sup> Հայոց զատկին:

Տաղ հոդյ  
ի Թոխարցի մնոեցի թարռուկ<sup>13</sup>

Յորժամ յարեւելից ի զատաստան զաս,  
Երեւիս արդարոց նոցա պըսակ տաս,  
Քան զարեզակըն եօթնապայծառանաս<sup>14</sup>,  
Յաշակողմեան զասուն երանի տի տաս:

Երկոտասան առացեալըն նըստին<sup>15</sup> ի զաս,  
Դաստին<sup>16</sup> զիին խօրայէլ՝ գործեցին<sup>17</sup> վընաս.  
Գարբելական փողոյն հըրաման կու տաս,  
Նորոգին նընջեցեալըն և զան ի յարտաքս:

Յորժամ խոստովանիս՝ նա արդարանաս,  
Նա յայնժամ ի մեղաց ի զատ կու կենաս.  
Անդարձ մեղաւորացըն վայ պիտի տաս,  
Չունին սէր Աստուծոյ, ոչ են առեր<sup>18</sup> մաս:

Կու<sup>19</sup> զալարին երկինց որպէս մազաղաթ  
Գարբիելական փողն կ առնէ զիամաթ<sup>20</sup>.  
Երանի արդարոց սէր ունին հաւատ,  
Մեղաւորըն են լալի մեղը են գործեր շատ:

Բաժնեն զմայրն ի արդէն, չառնեն<sup>21</sup> շա-  
[դաւաթ,  
թէ լաս՝ աղաղակես՝ ոչ կու տան մօհլաթ.  
Արդարըն ուրախութեամբ մըտնուն ի զը-  
[րախտ,  
Մեղաւորըն լալով ընկնին<sup>22</sup> խորխորատ:

Թէ ունիս խելց ու միտք ու սէր ու հաւատ,  
ի յԱստուծոյ սիրուն մի՛ կենար ի զատ.

Տըւեր այնչափ բարիք<sup>23</sup>, արեր շաղաւաթ,  
ինքն անմահ թագաւոր և ունի վուրվաթ<sup>24</sup>:

Երանի<sup>25</sup> արդարոց, չունին դատաստան,  
Վերին<sup>26</sup> Երուաւաղէմ նոցա բուրաստան.  
Բազում տեղից ունին ի հոն օթեւան,  
Աստուծութեան տեսուն նոցա լիանան:

Մեղաւորըն մեղօց ապականեցան<sup>27</sup>,  
Սատանայըն են կանգներ<sup>28</sup> ի գէմ կու խըն.  
[դան<sup>29</sup>.  
Տանին զնոսա դըժոխըն խաւարական  
Եւ տանջեն անողորմ ըստ սովորական:

Իմաստունըն ի խելաց այլ յիմարեցան,  
Տեսին զահէղ բաներն և զարհուրեցան.  
Արդարըն իւրեանց գործօրն այլ ուրախա-  
[ցան,  
Պըսակ առին ի յԱստուծոյ զանազան:

Խաչին լուսով արդարըն լուսաւորին,  
Յետեւանց պիտի զայ Որդին Միածին.  
Մեղաւորը կուրանան չի տեսնու աչվին,  
Զարդարըն տի օրհնէ որպէս զիւր որդին:

Դըժոխըն աղաղակէ մեղաւորին դին,  
Խաւար անքուն որդունըն ըընակէին<sup>30</sup>.  
Կըրճուն միարան ի հոն ժողովին,  
Վայ եկեր այն<sup>31</sup> աւորըն մեղաւորին:

Գարբիէլ, Միքայէլ զփողըն զոչէին,  
Զարդարըն և զմեղաւորըն զարթուցանէին<sup>32</sup>.  
Ամէնըն միարան ի հոն ժողովին  
Վայացըն յԵրուաւաղէմ մօտ թագաւորին:

Արդարը սըրաթըռիչ որպէս զարծըւին  
Քըթթել ականն յիւրեանց տեղին հասանին.  
Մեղաւորըն մընան ի Գիտսամանին  
Որոյ զըժոխոց դուռն<sup>33</sup> ի հոն կ'երեւին:

Թաթո՛ս, ատէ ըզմեղըն և գործէ զբարին,  
Աշխարհըս սոււ եղեր է անցաւորին.  
Գիտացից<sup>34</sup> որ Աստուծ է մեր սիրելին,  
Կու տայ զարբայութիւնըն զինց սիրողին:

Թարոսի ասացեալ

Տէր, արարիչ արարածոց  
դասուց անթիւ ես ' անհամար.

Զհողն ի ջըրոյն բաժանեցեր  
և ի վերայ ջուրցըն նըստար:

Զարարածոց ըսկիքն դըրիք  
վեր ցակեցեր զջուրըն կամար,  
Ապա ետուր հողուն հրաման,  
ծաղկունց բուսան անհամար հազար:

Բզծառս և զտունկս ըստեղծեցեր,  
ըզպըտղարերքըն հաւասար.  
Հանց գեղեցիկ զարդարեցեր,  
զաշխարհ արիք նախշ ու նիկար:

Զշորբուանիքն ըստեղծեցեր  
' ազգի ազգի շատ ճանաւար.  
Դարձեալ թրաչունց ըստեղծեցեր,  
երամ կապեն հարիւր հազար:

Յետոյ զԱղամ ըստեղծեցեր,  
ափ մի հոռոյ զնա ընկալար:  
Գերի թաթոս մըտօց յիմար,  
մեղօց դարձեր ես կունահքար:

Այլ տաղ թարոսէ

Ֆրիսոսո որդի Աստուծոյ,  
Փրկեա զնոպիս ի հըրոյ,  
ինձ բարի ճանփիկ ցըցու,  
Աստուած քաւեա զբազմամեղս:

Ճամփիկս է նեղ ու հեռու,  
Խընդիրը ունին ինձ գալու,  
Զհողիս յինչն առնելու. Աստուած...

Մեղօքս եմ խիստ անճըրկեր,  
Զհողիս եմ սեւացուցեր,  
Մտեղծօղն է ինձ բարկացեր. Աստ...

Մեղացն ինչ ճարակ կենայ,  
Զօրըն մեղայ ասէ նա,  
ՅԱստուածածինն յուսայ նա. Աստ...

Մեղը եմ գործեր անզրդայ,  
Օր մի չասի թէ մեղայ.  
Անտէն ինձի դէմ 'տի գայ. Աստ...

Աչցս ի յարատ հայեր է,  
Լեզուս սուտ վրկայեր է,  
Իմ Ցէրն ինձ բարկացեր է. Աստ...

Բերանըս պար կերեր է,  
Պատուիրանէն ելեր է,  
Անշահ յիշոցը տըվեր է. Աստ...

Մեղօք ի լի է հոգիս,  
Օր մի չասի թէ գայ զիս,  
Ամէնքդ եկէր լացէր զիս. Աստ...

Տարին տանուերկու ամիս,  
Հողն եմ ընկեր աշխարհիս,  
Զիշեցի զօր վախճանիս. Աստ...

Զմարմինս ի հոդոյ ստեղծեց,  
Հողով մըտօք զարդարեց,  
Բարի գործել հըրամեց. Աստ...

Աստուածածին Մարիամ՝  
Դու տուր ինձ բառը ու բերան,  
Ապաշխարեմ և զիս լամ,  
Միթէ տանշանքս թեթեման:

Մեղօքս ես ի շուրջ կու գամ,  
Գիշեր ու ցորեկ կու լամ,  
Վախեմ թէ անզեղջ մընամ. Աստ...

Աստուածածին բնակարան,  
Եկեղեցի աննըման,  
Մեղաւորաց քաւարան՝  
Եւ անմեղաց պահապան:

Հոգիս ու մարմինս եղբայր՝  
Մարմինս չարաւ հոգոյս ճար,  
Անտէնն է անզենեհար. Աստ...

Մեղք եմ գործեր անզրդջայ,  
Քանտէնէն խապար կու տայ,  
Մեղաւորաց վայ կու տայ. Աստ...

Մեղք եմ գործեր դիմար ես,  
Իմ Տէր՝ մեղայ կ'ասեմ բեզ,  
Մեղաւոր եմ սեւելես. Աստ...

Մեղօք զհողիս կու տանջես,  
Մեղաւորիս չի լըսես,  
Յոյս 'և ապաէնըս դու ես. Աստ...

Խոստովանիմ քահանին,  
Հաւատամ զհայր և զմրդին,  
Պաշտեմ սուրբ զԵրորդութիւն. Աստ...

Ես մեղաց զաւակ էի,  
Մեղօք զհողիս կորուսի,  
Հասաւ օրըս վախճանի. Աստ...

Այս ի՞նչ բան է որ արի,  
Ողորմութիւն այլ չարի,  
Զաղքատն ի տուն չի թողի. Աստ...

Թաթոսըն լայ ողրալի  
Վերայ մեղացն որ ունի,  
Տէրն ողորմած ամենի՝  
Ի բազմամեղս զըթասցի:  
Հրատ. Հ. Մ. Պոտուրսկ

## ՀԱՅԵՐԸ ԲԱՐԻԶԻ ՄԷՋ

«Ամէն մարդ երկու հայրենիք ունի,  
Իրենը և յետոյ փաղիս»:

Գաղիս՝ այն գեղեցիկ երկիրը, որուն  
կը ձգտին քաղաքակիրթ ժողովուրդներու  
առաւելագոյն սիրոյն ամէն զզացումները,  
մանաւանդ բարիգ, յաւերժաբար զարմա-  
նասքանչ է, և պիտի մնայ միշտ ամբողջ  
երկրագունախս հրապուրիչն. Մարսէյլի և  
Մոնրէլիչի նման Հայկական բազմաթիւ  
զաղութ մը պահած է միշտ:

Եւ իրօք Բիթիւէի (Loiret) եկեղեց-  
ուոյն պաշտպան սուրբերէն մին է Ա. Գրի-

գոր Նիկոպոլսեցի (Հայաստան), ծնած Ժ  
զարուն այդ քաղաքին մէջ. որ թողուց հայ-  
րենիքը, Կորից Խոսալիան, թափառեցաւ  
կեղտաց մէջ, և Հայաստանէն հետն ա-  
ռած երկու բնկերները ճանապարհին մէջ  
կորսնցնելէն վերջ՝ հաստատուեցաւ ի Բի-  
թիւէի ։

Բազմաթիւ Հայեր Գաղիս եկան նաև  
յետ Լևոն Զի (Կամ Ե) Հայոց վերջին  
թագաւորին, որ գահազուրկ՝ եկաւ կնքել  
իւր օրերը Բարիգի մէջ ի 29 Նոյեմբեր  
1393:

Հայոց պատմութիւնը կը յիշատակէ  
քանի մը Հայերու անցրը ի Գաղիս ԺԲ  
զարու մօտերը, կ'երեայ այդ թուականին  
պիտի ըլլայ այն Հայատա արձանագրու-  
թիւնը Պուրդի Մայր եկեղեցւոյն ճափ րեին  
սեան մը վրայ՝<sup>3</sup> Յետ ընութեանց՝ ձեռնհաս  
գիտնականները հաստատեցին՝ որ այդ ար-  
ձանագրութիւնը Սարգիս անուամբ Հայու  
մ'էր, այդ քաղաքին մէջ հաստատուած  
կամ անցրդ. Ե տեղույն կղերին մեծ պար-  
զմ մ'ըրած ըլլալուն համար, պահանջած  
էր իրրե փոխարէն՝ որ իւր յիշատակը  
պահուէր կաթողիկէին սեան մը վրայ փո-  
րագրուած:

Լազրանի (Լանկըտոց) արբայանոցէն  
բերուած լատին ձեռագիր մը՝ ունի հա-  
յերէն ծանօթութիւն մը՝ գրուած Սերաս-  
տիոյ Ալմէնն եպիսկոպոսէն, որ Զատիկը  
կտարած էր Լազրանի եկեղեցւոյն մէջ  
1388ին<sup>4</sup>:

Պատմիչը կ'աւանդէ՝ թէ Անշլէէ Կըր-  
ցածն ըրաւ՝ որ Արևելքի մէջ գաղիսական  
ազգեցութիւնը զօրացնէ. մղումն տուաւ  
Գաղիոյ մէջ արևելքան ուսմանց. նոյն իսկ  
մտածեց Արևելքէն ձեռագիրներ բերել տալ՝  
իւր գրադարանը զարդարելու համար, և  
օգտակար ըլլալ գիտնականներու որ պիտի

1. Fr. Macler, mosaïque orientale.

2. Compte rendu de la séance du 25 janvier 1872 du Comité local d'histoire et d'archéologie par Mgr. de la Tour d'Auvergne Languais.

3. Léopold Delisle, Le Cabinet des Manuscrits.